

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կայուն զարգացման ազգային խորհրդի աշխատանքային
գործունեության ձևավորմանը նվիրված
Կլոր սեղանի

«Կայուն զարգացման ազգային խորհրդի և
քաղաքացիական հանրության ներուժի ամրապնդում
Կայուն զարգացման մոտեցումները խթանելու համար»
ծրագրի շրջանակներում

22 նոյեմբեր 2006թ. Երևան,
Անի Պլազա հյուրանոցի «Անի» դահլիճ

2006թ. նոյեմբերի 22-ին Անի Պլազայում տեղի ունեցավ Կլոր սեղանի նվիրված Կայուն զարգացման ազգային խորհրդի աշխատանքային գործունեության ձևավորմանը: Կլոր սեղանին ներկա էին թվով 65 մասնակից, որոնց թվում ներկայացուցիչներ կառավարման համակարգից, Ազգային Ժողովից, տարբեր ոլորտների հասարակական կազմակերպություններից, ԶԼՄ-ներից, գիտահետազոտական կենտրոններից, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից (ՄԱԿ ԶԾ, ԵԱՀԿ, ՀԲ, ԱՄՆ ՄԶԳ և այլն): Մասնակիցների ցանկը կցված է:

Միջոցառումը վարում էր ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ պարոն Ս. Պապյանը, որը նախարարի անունից հանդես եկավ ողջույնի խոսքով:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՄԱԿ-ի ԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ պարոն Ա.Ավանեսովը:

Այնուհետև պարոն Ս.Պապյանը ներկայացրեց Կայուն Զարգացման համառոտ պատմական ակնարկը, և Հայաստանի մասնակցային գործունեությունը ԿԶ համաշխարհային գործընթացին՝ հանձինս վավերացրած միջազգային պայմանագրերի և ստանձնած միջազգային պարտավորությունների: Անդրադարձավ 2001 թվականի օգոստոսին Յոհանեսբուրգի Կայուն Զարգացման Համաշխարհային գագաթաժողովին Հայաստանի պատշաճ մասնակցությունը ապահովելու նպատակով, ՀՀ կառավարության կողմից նախապատրաստական աշխատանքների իրականացման համար Ազգային Հանձնաժողովի ստեղծմանը, որի անդամներն էին ՀՀ կառավարության, Ազգային Ժողովի և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները, գիտական ներուժը: Արդյունքում մշակվեց Rio+10 Գնահատման Ազգային Զեկույցը, որը ներկայացվեց 2002թ. Յոհանեսբուրգում կայացած Կայուն Զարգացման համաշխարհային գագաթաժողովին ՀՀ պատվիրակության կողմից: Ազգային գնահատման զեկույցում արտացոլվեց ազգային հրատապ և կենսական վեց խնդիրներ, որից չորսը՝ բնապահպանական են: ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1102-Ա որոշման համաձայն ստեղծվեց Հայաստանի Հանրապետության Կայուն զարգացման Ազգային Խորհուրդ և հանձնարարվեց ՀՀ բնապահպանության նախարարին ձևավորել ԿԶ քարտուղարություն՝ Խորհրդի աշխատանքները կազմակերպելու նպատակով: Պարոն Ս.Պապյանը զեկույցում

կարևորեց ԿԶ ուղղությամբ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացի միասնական կառավարման և համակարգման ինստիտուտի ձևավորումը, որը և կիրականացնի ԿԶ ազգային ռազմավարության մշակումը:

Այնուհետև անդրադարձավ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակված և իրականացված ծրագրերին և գործողություններին, առանձնապես կարևորելով նոր ՇՄՊԳԱԾ մշակման անհրաժեշտությունը, որը կսահմանի հստակ առաջնայնությունները, արդի բնապահպանական գերակայությունները, առավել օպտիմալ համադրություններով ծրագրերի, հայեցակարգերի, ինչպես նաև ներդրումային միջոցառումների, տնտեսական և ժողովրդավարական բարեփոխումների հիմքերի վրա հիմնված քաղաքականության և ռազմավարություն ուղղությունների մշակումը ի նպաստ Հայաստանի Հանրապետությունում կայուն զարգացման ապահովմանը:

Պարոն Ս.Պապյանը ելույթը եզրափակեց նշելով, որ Հայաստանի ակտիվ մասնակցությունը միջազգային, համաեվրոպական և տարածաշրջանային գործընթացներին վկայում է, որ Հայաստանը պատրաստակամ է հետամուտ լինել կայուն զարգացման գաղափարներին և իրականացնել հավասարակշռված և փոխկապակցված քաղաքականություն, ապահովել հանրապետության ինչպես սոցիալ-տնտեսական զարգացումը, այնպես էլ բնապահպանական խնդիրների աստիճանաբար լուծումը (ելույթը կցվում է):

Այնուհետև համաձայն օրակարգի տ-ն Ռ.Դավթյանը, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ, ծրագրի ազգային համակարգողը, ներկայացրեց «Կայուն զարգացման ազգային խորհրդի և քաղաքացիական հանրության ներուժի ամրապնդում Կայուն զարգացման մոտեցումները խթանելու համար» ծրագիրը, նշելով որ, բնապահպանական կառավարման բնագավառում ՄԱԶԾ-ի հիմնական նպատակն է աջակցել կառավարությանը համահունչ դարձնել շրջակա միջավայրի հիմնախնդիրները իր իսկ առջև դրված տնտեսական և սոցիալական նպատակների հետ, ԿԶ գաղափարախոսությանը համապատասխան` ՀԶԼ-ներին հասնելու նպատակով: Տ-ն Ռ.Դավթյանը մանրամասն ներկայացրեց (ելույթը կցվում է) ծրագրի նպատակները և իրականացված գործողությունները` կարևորելով շահագրգիռ կառույցների ակտիվ մասնակցությունը և առաջարկությունը ծրագրի հիմնական նպատակի ԿԶԱԽ ինստիտուցիոնալ կառուցվածքի մշակման աշխատանքներին: Տ-ն Ռ. Դավթյանը ներկայացրեց միջազգային փորձագետին, որը գտնվում է առաքելությամբ Հայաստանում և կլոր սեղանին հանդես կգա իր մոտեցումներով և նկատառումներով:

Միջազգային փորձագետ տ-ն Մ.Բախնովան հանդես եկավ շնորհակալական խոսքով և նշեց, որ առաքելության ընթացքում իրականացրել է մի շարք այցելություններ տարբեր նախարարություններ և ծանոթանալով ծրագրերին և իրականացվող գործընթացներին, կարևորեց նոր մշակված ծրագրում կայուն զարգացման բաղադրիչի առկայությունը, որը հենապայուն կծառայի երկրի կայուն զարգացման հետագա պլանավորմանը:

Կայուն զարգացման գործընթացը Հայաստանում ներկայացրեց «Հանուն կայուն մարդկային զարգացում» ասոցիացիայի նախագահ տ-ն Կ.Դանիելյանը` իր ելույթում կարևորելով կայուն զարգացման էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, և հոգևոր հոգեբանական ասպեկտները և ինչ քայլեր, մեխանիզմներ են անհրաժեշտ իրականացման համար:

Սուրճի ընդմիջումից հետո պարոն Ս. Պապյանի առաջարկությամբ 2002թ-ից ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերի մասին հանդես եկան կառավարման տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ ներկայացնելով իրենց կողմից իրականացվող ծրագրերը և միջոցառումները:

Տ-ն Ռ. Ալավերդյանը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալը, իր ելույթում շեշտադրեց, որ չեն կարող լինել առանձին բնապահպանական, քաղաքաշինական կամ առողջապահական խնդիրներ, և որ պետք է ինտեգրացված մոտեցում ցուցաբերել առկա խնդիրները լուծելու համար: Մինևս ժամանակ նշեց, որ միջսեկտորալ խնդիրը Հայաստանում այդքան վատ վիճակում չէ, սակայն հորիզոնական, սեկտորալ համգործակցությունը պետք է ընդլայնել և ամրապնդել: Որպես օրինակ ներկայացրեց 40 հատակագծեր, որոնց նախագծմանը համադրվել են քաղաքաշինական և բնապահպանական օրենսդրությունները: Առանձնապես ԿԶ ուղղությամբ կարևորեց քաղաքաշինության նախարարության համագործակցությունը Եվրամիության տարածական պլանավորման խորհրդի CEMAT հետ 2005թ. Հայաստանի ստորագրած լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի շրջանակներում:

Տ-ն Ռ.Ալավերդյանի հետ համակարծիք է պարոն Կ.Արեյանը, Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը, նույնպես հատուկ ընդգծելով, որ ԿԶ բնապահպանական ոլորտը չէ միայն ընդգրկում, այլև շատ այլ ոլորտներ հանձնես տնտեսության, մշակութային, հանրային սեկտորի, պետությունների համագործակցության և այլն:

Պարոն Արեյանը ներկայացրեց քաղաքապետարանի գործունեությունը՝ ընդգծելով 2003թ. Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրույթների մշակումը, որը 2004թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից (2004-2007թթ ծրագիրը), որտեղ բոլոր ոլորտները ունեն իրենց գործողությունները: Երկրորդ կարևորագույն խնդիրը քաղաքի գլխավոր հատակագծի հաստատումն է: Սա հիմնարար փաստաթուղթ է, որը ներառում է սոցիալ-տնտեսական ոլորտը: Այնուհետև հաստատվեց իրացման միջոցառումների ծրագիրը՝ հստակ ժամկետներով: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 1 200 մլն. դրամ 2007թ. համար: Սա լավագույն փաստաթղթերից է, որը և ԱՀՌԾ – ի, և միջնաժամկետ ծրագրերի և ԿԶ իրականացումն է ապահովում:

ԱՀՌԾ- ն որպես հիմնական ռազմավարական փաստաթուղթ ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ պարոն Ա.Մինասյանը: Հատկապես ընդգծեց իր ելույթում, որ ԱՀՌԾ – ում նախանշված բոլոր ոլորտներում կան առաջընթացներ և նշանակալից ձեռքբերումներ, մինևս ժամանակ կա անհրաժեշտություն նոր նպատակադրումների, ուստի 2006թ-ին իրականացվում է դրա վերանայման գործընթացը: Պարոն Մինասյանը 2003թ. ԱՀՌԾ-ի շրջանակներում սոցիալական ծրագրերը գնահատեց որպես պասիվ ծրագրեր և որպես դրական առաջընթաց հայտնեց, որ վերանայված տարբերակում նախատեսվում են սոցիալական ակտիվ ծրագրեր, հանձնես՝

- ժողովրդագրական ցուցանիշների ամրագրման (եթե կենտրոնում մարդը չկա, եթե կենսապահովման անհրաժեշտ պայման չկա, ուրեմն Կայուն զարգացում չի կարող լինել);
- ընտանիքի նկատմամբ պետական քաղաքականություն (ընտանիքը որպես պետության հիմնական բջիջ պետք է իրացնի հասարակության մեջ իր իրավունքները):

Պարոն Մինասյանը եզրափակեց ելույթը հայտնելով, որ ԱՀՌԾ նոր ամփոփված, վերանայված տարբերակը պատրաստ կլինի 2007թ. փետրվար - մարտ ամիսներին:

Առևտրի և տնտեսական նախարարության կողմից կայուն տնտեսական զարգացման ռազմավարության նախագիծը ներկայացրեց պարոն Հ.Մարգարյանը՝ տնտեսական քաղաքականության և զարգացման պլանավորման վարչության պետը: Պարոն Մարգարյանը անդրադարձավ 2004թ. թիվ 304-Ա ՀՀ վարչապետի որոշմանը «ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակման աշխատանքները կազմակերպելու մասին», համաձայն որի ստեղծվել է համակարգման խորհուրդ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար պարոն Կ. Ճշմարիտյանի նախագահությամբ: Այժմ իրականացվում են աշխատանքներ կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակման ուղղությամբ և արդեն պատրաստ է նախագծային տարբերակը, որտեղ ներկայացված են ՀՀ տնտեսական զարգացման մեխանիզմները (մրցակցային առավելությունների ձևավորում, ինովացիոն զարգացում, գործարար միջավայրի շարունակական բարելավում, արտահանման խթանում, տարածքային զարգացում):

Այնուհետև տիկին Բախնովան հանդես եկավ մի շարք առաջարկներով ԿԶԱԽ անդամների համալրման ուղղությամբ, մասնավորապես առաջարկեց ընդգրկել ՀՀ տրանսպորտի և կապի, էներգետիկայի և կրթության և գիտության նախարարներին, ինչպես նաև սփյուռքի ներկայացուցիչ:

Որպես ԿԶ հրատապ հիմնախնդիր համաձայն Rio+10 Ազգային գնահատման զեկույցի հանդիսանում է Սևանա լճի հիմնախնդիրը: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ ներկայացրեց Հիդրոլոգիայի ինստիտուտի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար պարոն Բ.Գաբրիելյանը: Իր զեկույցում հատկապես կարևորեց «Սևանա լճի մասին» 2001թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված ՀՀ օրենքը, համաձայն որի Սևանա լիճը սահմանվում է որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, առողջապահական և հոգևոր արժեք ունեցող քաղցրահամ ջրերի ռազմավարական օբյեկտ: Ընդունվել է նաև «Սևանա լճի էկոհամակարգի, վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագիր» ՀՀ օրենքը: Անդրադարձավ նաև ձկան պաշարների պահպանության խնդրին:

Ելույթները եզրափակեց պարոն Ս.Պապյանը մանրամասն ներկայացնելով թե ինչ միրոցառումներ և ծրագրեր են ձեռնարկվել և իրականացվել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2002թ.-ից հետո:

Պարոն Պապյանը իր զեկույցն ավարտեց ԿԶ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների ուշադրությանը ներկայացնելով ԿԶԱԽ անդրանիկ նիստի օրակարգը և 2007թ. աշխատանքային ծրագրի նախագիծը, համաձայն որի. առաջին եռամսյակում ԿԶԱԽ-ը կքննարկի ԱՀՌԾ վերանայված ծրագիրը, երկրորդ եռամսյակում՝ կրթություն հանուն կայուն զարգացման, երրորդ եռամսյակում կներկայացվի

ՇՄՊ ԱԳԾ-2, չորրորդ եռամսյակում կքննարկվի կայուն տնտեսական զարգացման բլոկը:

Հարց ու պատասխան քննարկումների ժամանակ բազմաթիվ հարցեր բարձրացվեցին Երևան քաղաքի կանաչապատման վերաբերյալ, որոնց պարոն Արեյանը հստակ պատասխանեց, որ քաղաքի այգիների գոտևորման գործընթացը նախատեսված է գլխավոր հատակագծում և պետք է իրականացվի: «Խազեր» ՀԿ

նախագահը հարց բարձրացրեց նախքան փորձաքննություն անցնելը հասարակական լուսմների իրականացում են, թե՞ ոչ: Պարոն Պապյանը պատասխանեց, որ հասարակական լուսմները անց են կացվում օրենքով սահմանված կարգով: Հարց ու պատասխանն ամփոփելուց հետո պարոն Պապյանը եզրափակեց կլոր սեղանը նշելով, որ կլոր սեղանը ծառայեց իր նպատակին, այն է որ համատեղ ուժերով լուծումներ գտնվեն, որոնք և կնպաստեն առաջընթացին: Միաժամանակ հույս հայտնեց, որ միջազգային փորձագետ տ-ն Բախնովայի կողմից կներկայացվեն Հայաստանի համար իրատեսական առաջարկություններ ԿԶԱԽ-ի կանոնադրության, կազմի և ինստիտուցիոնալ կառուցվածքի վերաբերյալ: